

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇՄԲԹ 2 ՓԵՏՐՎ. 1907. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՍՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այլ ժամանակը հասած էր կրկին Ալեքսանդրիոյ ազգային գործերը մէջտեղ հանելու, որովհետեւ ողջամիտ դասակարգը կը սկսէր կոր ձանձրանալ և ժողովուրդին խօսակցութեան նիւթը սպառած էր սրճարաններու մէջ Վսեմ. Աբրահամ փաշա Բարթող իրաց այս անկերպարան կացութիւնը ի նկատ առնելով, վերջերս նամակով մը հրաւիրած է Վսեմ. Պօղոս փաշան որպէսզի բարեհաճի վերջնական կարգադրութեամբ մը վերարժարծել Ալեքսանդրիոյ ազգային տեղական խնդիրները: Կը լսենք թէ Վսեմ. Պօղոս փաշա պատասխանած է որ ինք չկենար ուղղակի միջամտութիւն մը ընել, բայց պատրաստ է բարեկամաբար խորհուրդ տալ Վսեմ Արթին պէյ Բէիզեանի որպէսզի առկախ կացութիւնը համաձայնութեամբ կարգադրէ: Եւ իրաւամբ Արթին

պէջ անցած կիրակի իր տունը հրաւիրած է երեսփոխանները և Ալեքսանդրիոյ հայ «երևելի»-ներէն մի քանին, անգական գործերուն վրայ խորհրդակցելու համար:

Ուրախ ենք յայտարարելու թէ կիրակի օրունան գումարումը ամուլ չէ անցած. ներկաները միաձայնութեամբ սրտշումի մը յանգած են և կը յուսացուի որ ձօտաւոր ապագայի մը մէջ ամէն ինչ կարգադրուի ընդհանուր բաղձանքներու համաձայն:

Փափաքելի է սակայն որ, գոնէ այս անգամ, պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողները ու խառնակիչները հանգիստ նստին անցերնին և անօգուտ ու աղմկալից գործունէութեամբ մը պատճառ չըլլան նորանոր դժուարութիւններ ստեղծելու:

Այս նկատողութեամբն է որ ծիծաղելիէն աւելի վնասակար կը գտնենք «Առժ. Յանձնախումբ» անուն մէկու մը կողմէ հրապարակ հանուած Յայտարարութիւն մը որ թէև անիմաստ սակայն կրնայ միամիտներու միտքը պղտորել:

Առժաման. Յանձնախումբը, զոր ճանչնալու պատիւը չունինք, կրտէ թէ «քանի մը յարաբերական դռնփակ ժողովներու մէջ», ի միջի այլոց որոշած է՝ «Ազգարարել ապօրինի Խնամակալութեան որ իր հաշիւները ներկայացնելով հրաժարի» Արդ, ինչպէս ըսինք վերը, յարաբերական դռնփակէն առաջ արդէն Բարթող փաշա ինք

ուղած է որ Առաջնորդարանի անկերպարան վիճակը կարգադրուի. հետևորար բաց դռներ խորտակողի հովեր առնելու պէտք չունէր այդ Առժաման. Յանձնախումբը:

Բայց ամէնէն ծիծաղելին Առաջնորդին դէմ եղած սպառնալիքն է. «Եւ որպէս զի ծայրայիզութիւններու տեղի չի արուին, կըսէ պ. Յանձնախումբը, ներկայ յայտարարութիւնով նաև Գեր. Առաջնորդ հօր ուշադրութիւնը հրաւիրել և ըստիպել, որ իր պաշտօնը և կոչումը ճանչնալով ծուլարանէն դուրս ելլէ և գործի սկսի, հակառակ պարագային Յանձնախումբս երբէք պատասխանատու չէ տեղի ունենալիք պատահականութիւններու հանդէպ»:

Շտաբի գուցէ ստակումով կը հարցնեն թէ ի՞նչ են այդ տեղի ունենալիք պատահականութիւնները, եթէ Առաջնորդը գուրս չելլէ «ծուլարան»էն:

Մենք թէև առիթ չունեցանք ներկայ գրտնուելու քանի մը յարաբերական դռնփակ ժողովներուն, բայց անխորհրդապահութեան մը շքնորհիւ կրցանք իմանալ այն Դրակոնեան պատիժները որոնց դիմում պիտի ըլլայ ստիպելու համար Առաջնորդ Հայրը որպէսզի դործէ:

Ահաւասիկ:

Ա. Պատուիրել Ալեքսանդրիոյ եւ Գահիրէի զոր դեղարաններուն որ Նորին Գերապատուու-

Թեան ու եւ է մաքրողական չլաճառեն:

Բ. Թաղումի կամ հարսնիքի չի հրաւիրել զինքը:

Գ. Ոտանաւորի հատորները առնել քովէն և ստիպել որ արձակ խորհի ու գրէ:

Դ. Իր ննջարանին ու նստած սենեակին պատերը ծածկել «Ազատ Խօսք»ի թերթերով:

Եթէ հակառակ այս «պատահական» թիւներուն, Առաջնորդը շարունակէ իր անգործօն պաշտօնավարութիւնը զոր այնքա՛ն ձեռնհասօրէն և խղճի մոտք ի գործ կը դնէ. այն ատեն նոր «յարտերական դռնփակ ժողով» մը պէտքը զգալի պիտի ըլլայ:



ՔՕՆՍՄԹԱՆՑԱՅԷՆ ԱՂԵՒՍԱՆ ԴՐՈՒԱ

(Շար. 34րդ թիւէն)

Երկար ատենէ ի վեր Եգիպտոս վերադառնալու որոշում տուած էի: Բայց նախ երկու բառ այդ որոշմանս հոգեբանական ծագումին վրայ: Որոշում մը ուրիշ բան չէ, ինչպէս ամէն ոք գիտէ, բայց եթէ ու եւ փափաքի մը հասունացած ձեռք, որ ներքին անդիմադրելի ուժի մը մղումին տակ՝ կը ձգտի իրողութեան վերածուիլ: Ուրեմն որոշումս Եգիպտոսը վերատեսնելու փափաքիս արդիւնքն էր: Բայց փափաքները կը ծնին միշտ կրկնուող զգայութեանց միօրինակութենէն: Այս պատճառաբանութիւններէն կը հետևի որ Ռուսմանիա զաղրած էր ինձի համար հաճոյքի ստինքը քամելէ և թէ ձանձրախտը - սկսած էր կրծել զիս:

Պատրակա՞ն հաճոյք, սակայն: Ու հոս կը ներկայանայ ցուրտ ու սաք կլիմաներու զերպանցութեան այնքան վիճուած ու տակաւին չի լուծուած խնդիրը: Ի՞մ մասիս՝ րոպէ մը իսկ չը պիտի վարանիմ քուէս տալու ի նպաստ վերջինին: Ամէն բանի իրական՝ արժէքը գնահատելու համար անսխալական դատանիչ մը կայ. կեանքի զգացումն է այն: Եւ Ռուսմանիա իր խնտաշունջ ձմեռներով որոնք Սեպտեմբրէն կ'սկսին և մինչև Ապրիլն կը տևեն, այդ զգացումը ամրապնդելու բնութիւնն ունենալէ շատ հեռու է: Ոչ մէկ տեղ, թերևս, գէջ նզանակը այնքան հաւատարիմ պատկերը կը ներկայացնէ Մահուան որքան Սեւ ծովու մեղամաղձոտ ափունքներուն վրայ: Դուրսը՝ ձիւնի անծայրածիր ըսպիտակութիւնները, որոնք պատանքի մը պէս կը փաթթեն բնութիւնը, գերկզմանային լուծիւն մը զոր ոչինչ կը համարձակի խզել. կեանքի, ոգևորութեան, շարժումի կատարեալ բացակայութիւն մէկ բառով: Ու հողույց մէջ, - կթէ մանաւանդ մենութիւնն միայն ունիս քիզի ընկերանպարտելի տրամութիւն, ու՝ հետեւաբար՝ յոռետեսութիւն: Այսպիսի մտաւորական վիճակներու մէջ է որ «Փարաւոններու՝ երկիրը» իմ երեւակայութեանս կը ներկայանար, ինչպէս գրուիչ գեղունի մը, իր բարերար, կենսախայտ Արևովը, իր յաւէրժապէս կապոյտ երկինքովը:

Երկրորդ և ոչ նուազ կենսական նկատողութիւն մը որ իր կարողութեան սահմանին մէջ նպաստեց սրտու՛միս բիւրեղեցման բնալուծա հոգեբանական գործողութեան, այն որոշումն է զոր Ռուսնէն կառավարութիւնը, քաղաքական-տնտեսական նկատումներէ մղուած առաւ, Աղեքսանդրիոյ և Քօնսթանձայի միջև նոր գիծ մը հաստատելով: Արգարի, անօգուտ չէ «ի վեր հանել» որ աւելի քան հաւանական էր որ ելիմտական կարգի

պատկանող պատճառներ զիս անկարողութեան մէջ
դնէին գաղափարս գործադրելու համար:

Հետեաբար՝ հինգշաբթի գիշեր էլ Նաւահանգսախն
ոստիկանատունը կ'երթամ անցազրի ձեակերպութիւն-
ները կատարելու համար: Պարտիմ ըսել որ անցագիր
չունենող օտարականի մը համար փոքր քաջութիւն չէ
գործ ունենալ ուղեմանական իշխանութեանց հետ, ո-
րոնց մեծէն մինչև ամենէն փոքրը զինքը օրէնքին
մարմնացումը կը նկատէ:

Ի՞նչ դաժան դէմք, ի՞նչ կասկածոտ նայուածքներ,
Աստուած իմ, իբր թէ ամէն օտարական որ իրենց եր-
կիրը ոտք կը կոխէ՝ ամբողջ Ռուսներին օղբ հանելու
չար զիտաւորութիւններ ունենայ: Օրէնսդիրը հազար-
ումէկ տեսակ խտտութիւններ երևակայած է օտարա-
կաններու բնակութիւնը կարելի եղածին չափ անկա-
րելի դարձնելու համար, իբր թէ «Ձարա Ռօմընիան»,
ինչպէս կը յորջորջեն, Եղեմական Դրախտն իսկ ըլլար,
մինչդեռ ամենէն նախանձոտ Եւրոպացի պատմիչներն
անգամ կ'ընդունին որ, Աստուածաշնջական տեղեկու-
թեանց համեմատ, Դրախտը Հայաստանի մէջ եղած է:
Իմ մտախ՝ անգամ մը իսկ բնակած քաղաքիս ոստիկա-
նատունը (բօլիճիա) ոտք կոխած չեմ:

Այդ բօլիճիա բառը, իր լատինական ներդաշ-
նակ հնչումին հակառակ, անպարտելի սոսկում մը
մը պատճառած է ինձի միշտ Հին Հռովմայեցի մայրե-
րը իրենց «որդեկունքը» վախցնելու համար կ'ըսէին.
«Էլոէ՛, հիմա Աննիբալը կուգայ.» այնքան մեծ էր ար-
հաւիրքը զոր կարդալինեցի զօրավարը սիռած էր այդ
ժողովուրդին վրայ: Նմանապէս թուրք ոստիկանու-
թիւնը այնքան սերտիւ կապուած է անլուր խժոժու-
թեանց ու բարբարոս մէթոտներու հետ՝ որ, չգաղա-
փարներու լծորդութեան» օրէնքին համեմատ, ոստի-

կան, ոստիկանատուն բառերը, ամէն Թուրքի-
արի քրիստոնէի մէջ ընդհանրապէս և ամէն հայու մէջ
մասնաւորապէս, սարսափի զգացում մը կարթնցնէ:
Արևմտեան երկիրներու մէջ երկարատև բնակութիւն
մը անհրաժեշտ է այդ նախապաշարումը թօթափելու
և իշխանութեանց մէջ օրէնքին գործադրիչները
տեսնել վարժուելու համար:

Այս պայմաններուն մէջ զիւրաւ կրմբոնուի որ
կա՛րքի ուժի և յանդգնութեան ապացոյցը տուի մեկ-
նումիս նախընթաց օրը, առաջինն ու վերջինն ըլլալու
պայմանաւ, երթալով նաւահանգստին ոստիկանա-
տունը:

(Շարունակելի)

Ա. Ճ.



Մ. ԿԵՍԱՐԵԱՆ ԵՒ ԵՂՐԱՐՑ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ ՍՆԱՆԿԱՑԱԾ

Վերջին թղթաբերով Պոլիսէն հասած թեր-
թիր կը ծանուցանեն թէ Մ. Կեսարեան և Եղբ.
վաճառատունը որ Ղալաթիոյ ու Պոլսոյ կողմը և
Լոնտոնի ու Ալեքսանդրիոյ իր մասնաճշգրտով
բաւական ընդարձակ գործառնութիւններ կ'ընէր
ամէն կարգի ապրանքներու և սակարանական
գործերու վրայ, սնանկ հռչակուած է:

Ընդհանուր բացը 45000 օսմ. սակիի չափ է
և զլիսաւոր պահանջատէրերն են.~ Թօքաթեան՝
3000 սակի, Տոյչէ Օրիանթ-Պանք՝ 3000, Վինըր
Պանք Փէրայն՝ 2400, Պանք ԽՍԹէն՝ 2200, Սին-
եօս Օղլու՝ 2200, Պանք Օթօման՝ 1300, Եղուարդ

Գարակէօզեան՝ 800, Արշակ Գարակէօզեան՝ 1000, Գրիգոր Յակոբեան՝ 1300, Գ. Մուրատեան՝ 500, Ճ. Զափուշօղլու՝ 1500, Յարութիւն Մուրատեան՝ 300, Յակոբեան և ընկ.՝ 400, Նազարէթ Գասպարեան՝ 400, Սեղանաւոր Եուսուֆեան՝ 300, Մանաս Բէիզեան՝ 400, Նշան Հանէսեան՝ 300, Թաղէոս Հանէսեան՝ 200, Էտուրրա Պէյքըր՝ 500, Գոհէնքա Աւար՝ 900, Ֆիս տ'Ազրամ Լէվի՝ 300, Ասայա՝ 200, Մ. Քէհեաօղլու՝ 500.

Փոխարէն այս 45000 ասկի պարաքին գրեթէ ապրանք ու պահանջք ոչինչ չկայ: Մնանկութեան գլխաւոր պատճառ կը նկատուին այն շատ անխոհեմ սայթաքումները զորս ըրած են Լոնտոնի ճիւղին տնօրէն Խաչիկ Կեսարեան և Աղեքսանդրիոյ գրասենեակին պետ Ներսէս Կեսարեան:

Ասկէ 4 ամիս առաջ Լոնտոն եւ Աղեքսանդրիա հաստատուած եղբայրները թերթերու ըսածին նայելով, Պոլիս կ'երթան եւ այն եղի Միհրան եւ Նշան Կեսարեաններուն հետ 4 եղբայր գաղանի խորհրդակցութիւններով կ'որոշեն աս սնանկութիւնը ի գլուխ հանել. և իբր առաջին դործ անհրաժեշտ կը համարին Լոնտոնի եւ Աղեքսանդրիոյ ճիւղերը բաժնել Պոլսոյ Մայր Տունէն: Ու իրապէս ասկէ առաջ Լոնտոնի Խաչիկ Կեսարեանը յանկարծ զատուեցաւ միւս եղբայրներէն և Կեսարեան Քոմբանի Լիմիթըտ ա-

նուն ընկերութիւն մը հաստատեց, որը ուռուցիկ էր հիմամբ: Յետոյ քաղաքիս ճիւղին տնօրէն Ներսէս Կեսարեան նմանապէս բաժնուեցաւ իր անուամբ սկսաւ աշխատիլ Ներածութեամբ, Արտածութեամբ, Պանքեռութեամբ, տպահովագրութեամբ, առևտուրով եւ սակարանով:

Ինչ որ օրինապէս սխալ է, սա պարագան է որ այս Տ. Ներսէս Կեսարեան իր բաժնունմը չը ծանոյց առևտրական աշխարհին մասնաւոր չըրջաբերականով մը, ինչպէս պէտք է ընել առհասարակ. և այս կապանդին միայն շնորհաւորական նամակներ դրած ասեն անուղղակի ուղած է հասկցնել իր բաժնուած ըլլալը:

Մնանկութեան գլխաւոր պատճառը, Պոլսոյ Կեսարեան եղբարց յայտարարութեան համաձայն, քաղաքիս ա. Ներսէս Կեսարեանը եղած է որ սակարանական անհաշիւ speculationներու մէջ 2700 սակիի չափ դրամ կորսնցուցած է:

Ներսէս Կեսարեան մտ երկու տարիէ ի վեր հաստատուած է Ազեքսանդիոյ մէջ ուր եկած առաջին օրէն բռնած յանկարծական ու չափազանց բարձրէն սլացող ընթացքը բաւական ծանրգլուխ փաճառականներու կռահել տուին թէ պիտի վիժէր այս գործը: Ու իրականութիւնը հաստատեց այս գուշակութիւնները:

Խնդիրը հիմա Պոլսոյ առևտրական գատարանին առջև է և եթէ ապացուցուի սնանկութեան խարդախութիւնը, հաւանորէն պատժական դատարանն ալ միջամտէ ըստ օրինի:

ՏԻՐԱԻՆԻ

Ամենախորին ցաւով կը լսենք թէ շունվարի վերջէրը Իզմիրի մէջ վախճանած է օր. Անահիտ Օհանեան, անտիական հասակի մէջ:

Օր. Անահիտ եղբօր աղջիկն է Ալեքսանդրիոյ ծանօթ և ոիրուած անճնաւորութիւններէն Տ. Պերճ և Գոսթան Օհանեանի որոնց մօտ կը գտնուէր տարիներէ ի վեր իր երկու քոյրերուն հետ:

Վաղամեռիկ օրիորդը ամառուան եղանակը անցնելու համար գացած էր Իզմիր իր ազգականներուն քով, երբ անողոր հիւանդութեան մը գոհ կ'երթայ յանկարծ, ո՛չ միայն խոր սուգի մէջ թողլով իրենները այլ նաև անհուն ցաւ պատճառելով բոլոր անոնց օրոնք մօտէն ճանչցած էին զինքը ու գնահատած իր շնորհալի աշխուժութիւնն ու մտաւորական կարողութիւնները:

ՀԱՆԴԷՍ

Որախութեամբ կիմանանք թէ Ալեքսանդրիոյ Հ. Յ. Դ. Կարմիր Խաչի Հայ Տիկնանց Միութիւնը մտերս լսարանական հանդէս

մը պիտի կազմակերպէ: Սոյն հանդէսին մէջ պիտի բանախօսեն մի քանի ծանօթ անձնաւորութիւններ և օրիորդաց Շաքէ խմբին կողմէ հայրենասիրական երգեր պիտի երգուին:

ՅՈՅՅԷՆ ԵՏԻԸ

«Լրարեր» ին աչքը լոյս:

Տեղական Դատարանը հինգ ամսուան բանտարկութեան դատապարտած է Հայ մը և երկու Յոյներ, որոնք իբր թէ մասնակցած են եղեր Ռուսական Հիւպատոսարանին զինանշանը էջար առելու գործողութեան:

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Յայտնի է որ, ըստ տանգութեան Եղիա և Ենովբ Մարգարէները վերջնաշխարէն առաջ կրկին պիտի դան: Վերջերս իրաւամբ, Ամերիկայի մէջ մարդ մը, իբրև Եղիա Մարգարէ, սկսած էր քարոզութիւններ ընել և բաւական մեծ հանրաւ մը շինած էր միտմիաներու գործօն շարքերուն մէջ: Այդ գուցէ վաւերական կամ հաւանօրէն անվաւեր Եղիա Մարգարէն այս օրերս անգղիական շոգենաւով մը Ալեքսանդրիա կը հասնի բայց շոգենաւէն դուրս չելլեր սպասելով անշուշտ հրեղէն կառքին որ տակաւին չէր հասած:

Արդ, հաւատացեալներու մէջ կամաց կամաց կը տարածուի Եղիա Մարգարէին Ալեքսանդրիա համներուն լուրը և (ասիկա մտացճածին պատմութիւն մը չէ այլ ճշգրիտ իրողութիւն մը) հայ շաբաթապահ առաքելականներու խմբակ մը, չորս հինգ հոգիէ բաղկացած, կ'որոշէ շոգենաւ երթալ և տեսակցութիւն մը ունենալ Մարգարէին հետ. քանի որ Մարգարէն կը յամառէր ցամաք չելլել:

Խումբը կը համի մաքսատան քարափը և նաւակ մը վարձէ:

Հազիւ թէ ուխտաւորները ոտքերնին նաւակ կը դնեն, մէջերնին մին ամէնէն նախանձայոյզը և ամէնէն հաւատացեալը, իր մէջ կը զգայ աստուածային զօրութեան մը գալուստը և իր ընկերներուն դառնալով կը դռչէ.

- Տէրը իմ մէջս կը զգամ կոր, գուք ալ Տէրը սէջերնիդ ունի՞ք:


- Այո՛, կը պատասխանեն միւսներն ալ, Տէրը մէջերնիս է:

- Ուրեմն ետեէս եկէ՛ք, կ'ըսէ ներշնչեալը, ոտքի կ'ելլէ, ոտքին մէկը նաւակէն դուրս կ'երկընցնէ և կը պատրաստուի ջուրին վրայ քալելով երթալ Եղիա Մարգարէին շոգենաւը:

Բայց, հազիւ թէ առաջին կէս քայլը կ'առնէ, ջուր, ջուրին մէջ աներևոյթ կ'ըլլայ: Բարբախտաբար մտող գոննուոյ նաւավարները ան-

միջոցէս օգնութեան կը հասնին եւ անձնաս
կ'ազատեն մեր ուխտաւորը, որուն առած պաղ
տուշը շուտով կը մարէ իր հաւատացեալի ե-
ռանդը և խեղճը, առանց Եղիա Մարգարէն տես-
նելու ետ կը դառնայ թրջած հաւի մը պէս:

Տէրը ապահովաբար իր մէջը չէր:



ՄԵԿՆՈՒՄ

Ծանօթ հայ գրագէտուհի Տիկ. Զապել Ե-
սայիան որ ամիսուկէսէ ի վեր օգտփոխութեան
համար Բարիզէն Եգիպտոս եկած էր ու Գահիրէ
կը գտնուէր, երէկ առաւօտ Գահիրէէն Ալեքսան-
դրիա հասնելով, նոյն օրուան ֆրանսական նի-
ժէր շոգենաւով վերադարձաւ Բարիզ:

Տաղանդաւոր գրագէտուհին, որուն հետ
տեսակցելու բախտը ունեցանք, քաղցր յիշատա-
կով մը կը մեկնի Եգիպտոսէն՝ որուն կլիման
փափկամեղաւ կնահածութեամբ մը ամէն ջանք
ըրած եւ յաջողած է օգտակար ըլլալու Տիկին
Եսայեանի:

Տիկին Եսայեան մեզ յայտնեց թէ դիտա-
ւորութիւն ունի իր Եգիպտական տպաւորու-
թիւնները դրելու որոնք անշուշտ հաճոյքով պի-
պի կարգացունին ամենուս կողմէ:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԸ

Քանի մը կողմերէ մեզ կը հարցնեն թէ ի՞նչ եղաւ Տիգրան Երկաթ ժողովրդական Միութեան կայութիւնը, թէ մինչև հիմակ ի՞նչ գործունէութիւն ցոյց տուաւ նորընտիր Մասնախումբը և թէ յոյս կա՞յ հաստատ հիման մը վրայ դնելու այդ Միութիւնը:

Դժբախտաբար մենք կարող չենք այդ մասին որոշ տեղեկութիւն մը հաղորդելու, միայն թէ գոհութեամբ մեր թերթին մէջ կ'արձանագրենք այդ մասին մեզի տրուած ծանօթութիւնները, եթէ հեղինակաւոր ազբիւրէ մը ըըխին անոնք:



ՓՍՍՏԱԲԱՆ

Մ . Թ Է Ո Յ Ի Լ Ե Ա Ն

Կը ստանձնէ ամէն տեսակ դատեր Խառն Դատարաններու առջև. նմանապէս կը խմբագրէ ամէն պայմանագրութիւններ եւ այլ դատական պաշտօնագրեր:

Գրասենեակը կը գտնուի Մէնչիէի հրապարակին վրայ, Մօնֆէրաթոյի շէնքին մէջ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Երևոսասարգ յը պատրաստ է Ֆրանսերէնի, հայերէնի, անգլիերէնի, տունարակալութեան եւ ձաթէմաթիկի մասնաւոր դասեր տալ, ինչպէս նաեւ այցելու գրագրի պաշտօն ստանձնել շատ գոհացուցիչ պայմաններով: Իրմել Ազաւ Խօսքի խմբագրասաննր:

Ա Ձ Դ

Աթթարին փողոցը թիւ 39 խանութին մէջ կը վաճառուին հետեւեալ ապրանքները, ամենաբնորոշ տեսակէն և գոհացուցիչ գիներով:

Չէյթին եաղ, սապօն, ճերմակ պանիր, կովկասի հոչակաւոր սև խափեարը ինչպէս նաև կովկասեան և հայկական իշխան և Շամալի ձուկերը, նոյնպէս Եէմէնի խահուէ և այլ նպարիղէնք:

ԱՆՍՆ ԱՇՐԱՍԱՆՈՅ
ՈՐՈՐԴԱՆՆ ԵՒ ՏՊԱՐԱՆՆ ԱՇՐԱՍՈՒԹԵԱՆ
Կ ԶԻՋՔԻՔԻՔԻՆ
15 RUE STAMBOUL 15
ALEXANDRIE

Այս աշխատանքն իջ կը գործադրուին Գրգրէն և Լիբել յոյժ հարմար, Բազուլ, Գրգրէն, Շաղալ և Լիբել, Կրմով և Կիլ Երևոսանը, Պաթիսի և Զիլիկի-Պիլ և Կարմաշաթիլի Բարբիսի արհեստ:

Զարմանալի առն տեսող արհեստ և Եւրոպայի Զարմանալի Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի Զարմանալի արհեստ:

Այս աշխատանքը Երևոսան և Երևոսանը Արևոսանը, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ:

Եւրոպայի Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ, Զարմանալի Զարմանալի արհեստ:

«ԱՉՍՏ ԽՕՄԻ» ՁԵՆԻԿԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ
Ալեքսանդրիա՝ Տ. Յ.
Հագրիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեղլալեանի խանութը
Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հունկի և Կոլտրն Բէչօշ-
քի քով եւ «Լուսարեր»
Թերթի ցրուիչին մօտ:
Նախորդ շաբթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին գինով:

